

գոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հայ դպրոց (Ուայթ Փլէյնզ) եւ Քիրիկեան Հայ դպրոց (Թէ-նէֆլայ):

Ներկայ էին նաեւ Երիտասարդաց Կազմակերպութեան վարիչ-քարտուղարուհի Նէնսի Պասմաճեան, Երիտասարդաց Ծառայութեան Բաժանմունքի համակարգող Ճէնիֆըր Մօրիս, Ս. Ներսէս Ընծայարանի սաներ եւ Ս. Վարդան Մայր Տաճարի երէցներու խումբը:

Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսասարահին մէջ կազմակերպուեցաւ հիւրասիրութիւն եւ գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը:

Բացման խօսքը կատարեցին Խրիմեան ճեմարանի աշակերտուհիներ Նայատ Մանուկեան եւ Թալին Վաքիլեան: Արտասանութեամբ հանդէս եկան՝ Նայատ Մանուկեան, Ալէքս Զալիքեան, Ատրիանա Տէմիրճեան, Աննա Յակոբեան, Ալէն Տօքմէճիօղլու, Լէթիսիա Եանտըմօղլու, Քրիսթին Շալեան, Սարին Ճէպէճեան, Շողեր Դալար Քեսքինեան, Նիքոլ Սաղլամեր, Լօրի Սանակ: «Որք զարդարեցին» շարականը երգեց Մարօ Փարթամեան՝ դաշնամուրի ընկերակցութեամբ խմբավար Խորէն Մէլիսանէճեանի: Դաշնամուրի վրայ «Վաղարշապատի Պարը» նուագեց Տիանա Կիւլմէզեան: Հայկական պարով ելոյթ ունեցան Քրիսթինա Անի Յարութիւնեան, Անի Էսենեան, Մելիսա Կազալ, Մելիսա Նազար եւ Թալին Վաքիլեան: Հայկական երաժշտութիւն ներկայացուց Պերճ Մանուկեան:

Այս առիթով, Հայաստանի Արմաւիրի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն եպս. Աղամեան բոլոր ներկայ աշակերտներուն նուիրեց կարգ մը սուրբերու գունաւոր նկարները, որոնց ետին տպագրուած էր սուրբերու բարեխօսութիւնը հայցող աղօթք մը:

Սուրբ Թարգմանիչներու տօնի այս տպաւորիչ հանդիսութեան փակման խօսքը կատարեց առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ նախ շնորհակալութիւն յայտնեց Հայեցի Ուսմանց Բաժանմունքի համակարգող Կիլտա Քիւփէլեան-Պչաքճեանի, բոլոր ներկայ տնօրէններուն, ուսուցիչներուն, ծնողներուն եւ աշակերտներուն, որոնք ամէն տարի այս կարեւոր տօնին կը բերեն իրենց մասնակցութիւնը, եւ դարձեալ շեշտեց հայերէն լեզուի կարեւորութիւնը՝ օրինակովը Սուրբ Թարգմանիչ Վարդապետներուն:

ՆԻԻ ՃԸՐՁԻԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ ՕԾՄԱՆ 100-ԱՄԵԱԿԸ

Նիւ Ճըրզի Նահանգի Եունիըն Սիթի քաղաքի հայկական եկեղեցական կեանքը սկիզբ առած է 1899 թուականին՝ ոչ-հայ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանելով: 1906-ին կը կատարուի սեփական եկեղեցւոյ հիմերուն օրհնութիւնը, իսկ եկեղեցւոյ օծումը՝ 1907 թուականի Յունուար 27-ին: Հարիւր տարիներ շարունակ Ս. Խաչ եկեղեցին՝ իր դպրաց դասով, վարժարաններով, տիկնանց միութեամբ, երիտասարդաց կազմակերպութեամբ եւ եկեղեցապատկան այլ յանձնախումբերով հոգ տարած է իր հաւատացեալներուն եւ շրջակայքի հայերուն հոգեւոր կարիքներն ու պահպանած եկեղեցական-ազգային ինքնութիւնը: Հայց. եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան թեմերուն մէջ, որպէս կառոյց, մէկ դարու կեանք ունեցող եւ տակաւին աշխուժութեամբ գործող միակ եկեղեցին է Եունիըն Սիթիի Ս. Խաչ եկեղեցին:

Այժմու հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վազգէն ծ. վրդ. Գարայեանի նախագահութեամբ եւ Աբրահամ Պօղոսեանի ատենապետութեամբ կազմուած Յանձնախումբի ամիսներ շարունակ կատարած ծրագրումներուն շնորհիւ՝ կիրակի, հոկտեմբեր 15-ին տեղի ունեցաւ 100-ամեակի հանդիսութիւնը:

Առաւօտուն Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան: Պաշտամունքին ներկայ էին եկեղեցւոյ նախկին հովիւ եւ Արեւմտեան թեմի նախկին երկարամեայ առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեան, հիւրաբար քաղաքս գտնուող Հայաստանի Արմաւիրի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն եպս. Ադամեան եւ նախկին հովիւներէն Արժշ. Տ. Վրթանէս ա. քինյ. Գալայճեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Քրիս Գալֆայեանի: Ներկայ էր հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Ս. Պատարագի ընթացքին պատարագիչ Սրբազան Հայրը, որ բնաբան առած էր օրուան ճաշու Աւետարանէն Մարկոս աւետարանիչի «Այրի կնոջ լումա»-ի նախաձեռնութեամբ՝ ի մէջ այլոց ըսաւ. «... Աստուած մեզմէ իւրաքանչիւրին շնորհած է կարողութիւններ ու տաղանդներ, եւ կը սպասէ, որ մենք զանոնք ճոխացնենք ու բազմացնենք, ու անոնցմէ բաժին հասնենք մեր ազգին, եկեղեցիին ու համայնքին, ինչպէս նաեւ մարդկութեան: Մեր պատմութիւնը ցոյց տուած է, որ մեր նախահայրերը ոչինչ խնայած են իրենց հաւատքի ու մշակոյթի տուները կառուցանելու եւ զանոնք փոխանցելու իրենց յաջորդներուն: Նոյնը եւ աւելիով ըրին մեր Թարգմանիչ Վարդապետները, որոնց նուիրուած տօնը Հայ Եկեղեցին նշեց երէկ: Ս. Սահակ Հայրապետ, Ս. Մեսրոպ Մաշտոց եւ Թարգմանիչ Վարդապետներ իրենց անգնահատելի լուման ընծայաբերեցին հայ գիր ու գրականութեան եւ հոգեւոր մշակոյթի ստեղծման, զարգացման ու յաւերժացման նուիրական առաքելութեան: ... Անցեալ դարու սկիզբները նոյն օրինակին հետեւեցան նաեւ կարգ մը տեսլապաշտ անձեր, որոնք իրենց լուման սիրով նուիրեցին իրենց հաւատքի տան՝ Ս. Խաչ եկեղեցւոյ կառուցման ի նպաստ: Անցնող հարիւր տարիներու ընթացքին եկեղեցւոյ հոգեւորական եւ աշխարհական ղեկավարները անխափան կերպով շարունակեցին իրենց նախորդներու նուիրական առաքելութիւնը: ... Մեր Տէրը գնահատեց այրի կնոջ նուէրը ըսելով. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այդ չքաւոր այրին աւելի շատ ձգեց, քան գանձանակին մէջ միւս բոլոր դրամ ձգողները... ձգեց այն ամէնը ինչ որ ունէր...»: Վստահ եմ, որ նոյն գնահատականին արժանի են բոլոր անոնք, որոնք 100 տարիներու ընթացքին այս եկեղեցւոյ դռները բաց պահեցին, ստեղծեցին ու կազմակերպեցին հոգեւոր, ազգային, մշակութային եւ ընկերային մարմիններ՝ հաւատացեալներու հոգիներու մէջ վառ պահելով հաւատքի ու ազգային ինքնագիտակցութեան ջահը»:

Ս. Պատարագէն ետք, աւելի քան 420 անձեր, Ֆիէրթա Պանքուէթ Հոլի մէջ մասնակցեցան յոբելինական ճաշկերոյթին, որուն ընթացքին գործադրուեցաւ ճոխ յայտագիր մը:

Միացեալ Նահանգաց եւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգերը երգեց Սոլանժ Մերտինեան: Բացման աղօթքը արտասանեց նախկին հոգեւոր հովիւներէն Տ. Վրթանէս ա. քինյ. Գալայճեան: Բաժակաճառը՝ յանձնախումբի ատենապետ Աբրահամ Պօղոսեան: Բարի գալստեան խօսքը՝ Ծխական Խորհուրդի ատենապետուհի Ալիս Պոգոյեան: Օրուան հանդիսավարն էր Եկեղեցւոյ թեմական պատգամաւոր Նուպար Տօրեան: Գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին Սո-

լանժ Մերտինեան (մեցցո սոփրանո), Ալեքսանդր Ծիուպինսկի եւ Մարք Մարքս (ջութակ), Ալեքսանտր Նազարեան (վիոլա) եւ Լիլիթ Քիտիեան (չելլո): Խօսք առին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վազգէն Ծ. վրդ. Գարայեան եւ Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեան: Եկեղեցւոյ կեանքէն հետաքրքրական շարժանկար մը ներկայացուեցաւ: Հարիւրամեակի կարկանդակի հատման արարողութիւնը տեղի ունեցաւ: Եունիըն Սիթիի քաղաքապետ Պրայըն Սթաք ներկայացուց մասնաւոր «Յայտարարութիւն» մը: Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան Եկեղեցւոյ հետեւեալ հինգ գործունեայ անդամներուն յանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Հայրապետական Օրհնութեան Կոնդակը՝ Յակոբ սրկ. Յովսէփեան, Սիլվիա Պոգոյեան, Ֆիլիփ Արփիարեան, Անն Տատայեան եւ Մերի Շալաքեան:

Յոբելինական ճաշկերոյթի փակման խօսքն ու աղօթքը կատարեց առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան: Իր խօսքին մէջ Սրբազան Հայրը փառք տուաւ Աստուծոյ, որ Ս. Պատարագի մատուցմամբ, սիրոյ սեղանով ու յայտագրի գործադրութեամբ միասնաբար կը նշուի Ս. Խաչ եկեղեցւոյ 100-ամեակը: Ան ըսաւ որ Հիւսիսային Ամերիկայի ամբողջ տարածքին կառուցուած երրորդ եկեղեցին է ան: Տարիներու ընթացքին միւս երկու եկեղեցիները իրենց նախնական շէնքերն ու վայրերը փոխած են, միայն Ս. Խաչ եկեղեցին է, որ պահած է իր սկզբնական կառոյցը: Այսօր, ուրախութեամբ տեղեկացուց Սրբազան Հայրը, աւելի քան 100 եկեղեցիներ ունինք եւ տակաւին հետզհետէ կ'աւելնայ անոնց թիւը: Հարիւրամեակի այս հանդիսաւոր ձեռնարկին կազմակերպութեան համար գնահատեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւի, Ծխական Խորհուրդի անդամներուն եւ Կազմակերպիչ Յանձնախումբի անդամներուն կատարած անխոնջ աշխատանքը. անոնք կը հետեւին 100 տարի առաջ խումբ մը նուիրեալներու օրինակին՝ իրենց կարողութիւնները, աշխատանքն ու ժամանակը ի սպաս դնելով եկեղեցւոյ պայծառութեան ի նպաստ: Իրականացած երազ մըն է Ս. Խաչ եկեղեցին. ինչպէս իրականացած երազ մըն է մեր Մայր Հայրենիքի ազատութիւնն ու անկախութիւնը, որուն 15-րդ տարեդարձը տօնեցինք քանի մը շաբաթ առաջ, ըսաւ առաջնորդ Սրբազան Հայրը:

Ս. Խաչ եկեղեցւոյ 100-ամեակին առիթով հրատարակուած էր գեղատիպ ու պատկերազարդ գրքոյկ մը, ուր շնորհաւորականներ ունէին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Միացեալ Նահանգաց նախագահ Ճորճ Պուշ, Ամերիկայի Արեւելեան թեմի նախկին առաջնորդ եւ այժմու Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեան, առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեան, հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վազգէն Ծ. վրդ. Գարայեան, Նիւ Ճըրզիի կառավարիչ Ճան Գորգայն եւ այլ կառավարական եւ ազգային անձնաւորութիւններ:

Նորին Սրբութեան Օրհնութեան Գիրին մէջ ի մասնաւորի կ'ըսուէր.

«... Միրելի զաւակներ Մեր,

Աւելի քան մէկ դար առաջ, երբ հիմնադրուեց Եունեըն Սիթիի հայ համայնքը եւ քիչ անց նաեւ կառուցուեց Սուրբ Խաչ եկեղեցին, նոր շունչ ստացաւ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքը: Առաջնորդ ու ապաւէն ունենալով հաւատն առ Աստուած, մեր ժողովրդի զաւակներն իրենց կեանքը զարդարեցին ազգօգուտ ու եկեղեցաշէն

գործերով, նուիրեալ ծառայութեան բարի արդիւնքներով, որով Ս. Խաչ եկեղեցին եւ նրա Ծուխը դարձան օրինակելի ԱՄՆ հայոց Արեւելեան Տիրախնամ թեմում: Մեր հոգին ուրախ է, որ ինչպէս նախընթաց հարիւրամեակներուն, այսօր էլ Ս. Խաչ եկեղեցու շուրջ աշխոյժով ու եռանդով է լցուած հայ կեանքը»:

Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանը կը գրէր.

«... Արդարեւ, Միացեալ Նահանգաց Ուստր քաղաքի Ս. Փրկիչ առաջին Հայց. եկեղեցին յետոյ, քսաներորդ դարու առաջին տասնամեակին մէջ կառուցուած Հայց. եկեղեցիներէն է Եունիքն Միթիի Ս. Խաչ եկեղեցին, որ յարատեւեց՝ իբրեւ հոգեւոր տուն հովանի դառնալով մեր ժողովուրդի տարագիր զաւակներուն եւ յաջորդական սերունդներուն: Տիգրանակերտէն գաղթական հայորդիներու նախաձեռնութեամբ սկսուած այս հոգեւոր, մշակութային, ազգային եւ ընկերային հաւաքոյթներու կեդրոն ծառայած Հայկական Օճախը, դժուարին օրերու տազնապներ ապրելով հանդերձ, աճեցաւ սերունդէ սերունդ, եւ կը շարունակէ մնալ Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան թեմի աշխոյժ եւ գործունեայ համայնքներէն մէկը»:

Առաջնորդ Սրբազան Հայրը ըսաւ.

«... Անշուշտ որ մարդկային ջանքերը զօրացնող եւ օժանդակող մարդկայնութենէ աւելի մեծ ուժ մը գործած է ձեր մէջ մէկ դարու ընթացքին. ատիկա Սուրբ Հոգիի ներշնչումն էր: Յիսուս այս Հոգին բաղդատած է քամիին հետ, որ «որովհետեւ հովը կը փչէ ուր որ ուզէ, եւ դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ. այսպէս է նաեւ ամէն ոք, որ Հոգիէն ծնած է» (Յովհ. Գ. 8): Իւրաքանչիւր եկեղեցւոյ ետին՝ Ս. Հոգիի ներշնչումը կայ. Ան իջաւ այս եկեղեցւոյ վրայ օծման օրը եւ այսօր ալ ձեզի հետ է՝ երբ դուք ձեր ապագան կը ծրագրէք»:

Հարիւրամեակի յոբելինական հանդիսութիւնը, առաջնորդ Սրբազան Հօր խօսքերուն համաձայն, ծրագրումն է նոր հարիւրամեակի մը՝ ազգային եւ հոգեւոր կեանքի նոր նուաճումներով ու իրագործումներով առլցուն: